ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail:
artashatmeria@artashat.am

N Ե-1938
<<18>> ապրիլ 2024թ.

ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի
Տնօրեն Հայկ Գասպարյանին
ՀՎՀՀ՝ 00522502,
իրավաբանական հասցե՝ Ք. Երևան,Երկաթուղայիններ 4փ 2/6,
էլ. հասցե՝ HaykLV@yandex.ru,
հեռ.՝ 097900115

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 3, 4, 6 չափաբաժինների մասով Արտաշատի համայնքապետարանի /այսուհետև՝ պատվիրատու/ և ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի միջև /այսուհետև՝ ընկերություն/ 23 փետրվարի 2024թ. կնքված թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով Համակարգիչներ, տպիչ սարքեր, սնուցման բլոկներ, համակարգչային սերվեր, համակարգչային սարքավորումներ մատակարարման պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/: Որպես պայմանագրի կատարման ժամկետ սահմանվել է «Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում» ժամկետը:

Կողմերի միջև 20 մարտի 2024թ. կնքվել է թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով պայմանագրի թիվ 01 համաձայնագիրը:

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 22 օրացուրցային օրվա ընթացքում Ընկերությունը չի մատակարարել համապատասխան ապրանքները: Պատասխանատու ստորաբաժանման կողմից վերոգրյալի մասով կազմվել է համապատասխան արձանագրություն:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ «Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 /տասը/ օրվանից հետո:Ո րոշումը կայացվելու հաջորդ օրը այն տրամադրվում է Լիազորված մարմնին և մասնակցին»;

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթների՝ «Պայմանագիր կնքած անձի կոցմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապրակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին»:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1
կետերի՝ «2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էա
կանորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էակ
ան է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի հա
մար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի»;

Հիմք Ընդունելով վերոգրյալը Պատվիրատուի ղեկավարը հանձնարարել է՝

1. Սկսել Արտաշատի համայնքապետարանի և ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի միջև 23 փետրվարի 2024թ. կնքված թիվ N ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/03-1 ծածկագրով Համակարգիչներ, տպիչ սարքեր, սնուցման բլոկներ, համակարգչային սերվեր, համակարգչային սարքավորումներ մատակարարման պայմանագիրը 4 794 000 /չորս միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար/ ՀՀ դրամի չափով միակողմանի ամբողջությամբ լուծելու և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

2. Առաջարկել՝ ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ կազմակերպությանը 10 /տասը / օրացուցային օրվա ընթացքում վճարել պայմանագրի ապահովման և որոկավորման ապահովման գումարները:

Արտաշատ համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

Կատարող՝ աշխատակազմի գնումների բաժնի
Պետ Փ.Հակոբյան
հեռ.՝ 043 12 12 03